Երկրորդ ընթերցում

լրամշակված նախագիծ

Կ-534-20.03.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.#«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «իր պաշտոնում նշանակվելուն» բառերը փոխարինել «պաշտոնավարմանը» բառով:

Հոդված 2. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում, 125-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «նշանակմանը» բառից հետո, իսկ 112-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «նշանակվելուն» բառից հետո լրացնել «, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 112-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.# Դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների ցանկը, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված բժշկական զննության իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 113-րդ հոդվածում.

1) 1-ին մասի 8-րդ կետում, 2-րդ մասի 9-րդ կետում «նշանակմանը» բառից հետո լրացնել «, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը» բառերը:

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե առերևույթ առկա է դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, ապա Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմակերպվում է դատավորի թեկնածուի հավակնորդի կամ դատավորի թեկնածուի բժշկական զննությունը՝ սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգի համաձայն: Եթե անձը հրաժարվում է անցնել բժշկական զննություն կամ զննության արդյունքով հիմնավորվում է, որ առկա է դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, ապա Բարձրագույն դատական խորհրդի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի նիստ է հրավիրում:»:

Հոդված 5. Օրենքի 159-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետում «ունի դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն» բառերը փոխարինել «ունի դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ» բառերով.

2) 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայության դեպքում համապատասխան դատարանի նախագահն այդ մասին հայտնում է Բարձրագույն դատական խորհրդին և էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

4. Եթե առերևույթ առկա է սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը, ապա համապատասխան դատարանի նախագահը դիմում է Բարձրագույն դատական խորհրդին և էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Բարձրագույն դատական խորհուրդը կազմակերպում է դատավորի բժշկական զննությունը (դատարանի նախագահի դեպքում՝ սեփական կամ Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ) սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգի համաձայն: Դատավորը պարտավոր է անցնել բժշկական զննությունը:»:

Հոդված 6. Օրենքի ամբողջ տեքստում «ֆիզիկական արատներ և հիվանդություններ» և «ֆիզիկական արատ կամ հիվանդություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «հիվանդություններ և վիճակներ» և «հիվանդություն կամ վիճակ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

# #

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.#«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ ~~Օրենսգիրք~~Օրենք) 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «իր պաշտոնում նշանակվելուն» բառերը փոխարինել «պաշտոնավարմանը» բառով:

Հոդված 2. ~~Օրենսգրքի~~Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում, 458-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «նշանակմանը» բառից հետո, իսկ 112-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «նշանակվելուն» բառից հետո լրացնել «, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը» բառերը:

Հոդված 3. ~~Օրենսգրքի~~Օրենքի 112-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.# Դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների ցանկը, ինչպես

նաև սույն օրենսգրքով նախատեսված բժշկական զննության իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 4. ~~Օրենսգրքի~~Օրենքի 113-րդ ~~հոդվածի~~ հոդվածում.

3) 1-ին մասի 8-րդ կետում, 2-րդ մասի 9-րդ կետում «նշանակմանը» բառից հետո լրացնել «, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը» բառերը:

4) 4-րդ ~~մասի 1-ին նախադասությունը~~մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե առերևույթ առկա է դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, ապա Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմակերպվում է դատավորի թեկնածուի հավակնորդի կամ դատավորի թեկնածուի~~՝ սույն օրենսգրքով նախատեսված բժշկական զննության իրականացումը~~ բժշկական զննությունը՝ սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգի համաձայն: Եթե անձը հրաժարվում է անցնել բժշկական զննություն կամ զննության արդյունքով հիմնավորվում է, որ առկա է դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, ապա Բարձրագույն դատական խորհրդի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի նիստ է հրավիրում:»:

Հոդված 5. ~~Օրենսգրքի~~Օրենքի 159-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետում «ունի դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն» բառերը փոխարինել «ունի դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ» բառերով~~;~~.

2) 3-րդ ~~մասում «դիմում է Լիազոր մարմնին՝ դատավորի բժշկական զննությունն իրավասու մարմնի միջոցով կազմակերպելու համար» բառերը փոխարինել «դիմում~~և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայության դեպքում համապատասխան դատարանի նախագահն այդ մասին հայտնում է Բարձրագույն դատական խորհրդին~~՝ դատավորի՝~~ և էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

4. Եթե առերևույթ առկա է սույն ~~օրենսգրքով նախատեսված~~ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը, ապա համապատասխան դատարանի նախագահը դիմում է Բարձրագույն դատական խորհրդին և էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Բարձրագույն դատական խորհուրդը կազմակերպում է դատավորի բժշկական զննությունը (դատարանի նախագահի դեպքում՝ սեփական կամ Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ) սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգի համաձայն: Դատավորը պարտավոր է անցնել բժշկական ~~զննության իրականացումը կազմակերպելու համար» բառերով:~~զննությունը:»:

~~3) 3-րդ և 4-րդ մասերում «1-ին մասի» բառերը փոխարինել «2-րդ մասի» բառերով:~~

Հոդված 6. ~~Օրենսգրքի~~Օրենքի ամբողջ տեքստում «ֆիզիկական արատներ և հիվանդություններ» և «ֆիզիկական արատ կամ հիվանդություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «հիվանդություններ և վիճակներ» և «հիվանդություն կամ վիճակ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-534-20.03.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***Կառավարություն***	**Նախագծի վերնագիր**	Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը առաջարկում ենք փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով կատարվող լրացումների 1-ից ավելի լինելը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	***Կառավարություն***	**Հոդվածներ 1-6**	Նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերն առաջարկում ենք փոխարինել «(այսուհետ՝ Օրենք)» բառերով: Իսկ նախագծի 2-6-րդ հոդվածներում «Օրենսգրքի» բառը փոխարինել «Օրենքի» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	***Կառավարություն***	**Հոդված 2**	Նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք «10-րդ կետում» բառերից հետո լրացնել «, 125-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում» բառերը, իսկ «բառից հետո» բառերից	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հետո՝ «, իսկ 112-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «նշանակվելուն» բառից հետո» բառերը՝ ցուցաբերելով միասնական մոտեցում Օրենսգրքով սահմանված այլ դեպքերում ևս, օրինակ, դատավորի թեկնածուների ցուցակում ընդգրկված անձին նշված ցուցակից հանելու համար հիմք նախատեսել ոչ միայն դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայությունը, այլև նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների առկայությունը:		
4.	***Կառավարություն***	**Հոդված 4**	Նախագծի 4-րդ հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **«Հոդված 4.** Օրենքի 113-րդ հոդվածում. 1) 1-ին մասի 8-րդ կետում, 2-րդ մասի 9-րդ կետում «նշանակմանը» բառից հետո լրացնել «, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը» բառերը: 2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե առերևույթ առկա է դատավորի պաշտոնում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, ապա Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմակերպվում է դատավորի թեկնածուի հավակնորդի կամ դատավորի թեկնածուի բժշկական զննությունը՝ սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգի համաձայն: Եթե անձը հրաժարվում է անցնել բժշկական զննություն կամ զննության արդյունքով հիմնավորվում է, որ առկա է դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդություն կամ վիճակ, ապա Բարձրագույն դատական խորհրդի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի նիստ է հրավիրում:»: Փոփոխության նպատակն է դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակներից անձին հանելու հիմքերը դարձնել միատեսակ նաև պաշտոնավարող դատավորների համար՝ հաշվի առնելով, որ նշված հիվանդությունը կամ վիճակը կիրառելի է լինելու բոլորի համար:		

5.	***Կառավարություն***	**Հոդված 5**	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենսգրքի գործող 159-րդ հոդվածում հղումները չեն համապատասխանում հոդվածի կառուցվածքին, և առկա է անհամապատասխանություն՝ Բարձրագույն դատական խորհրդին և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին դիմելու դեպքերի մասով, ինչպես նաև այն, որ վկայակոչված հոդվածում բացակայում է դատարանի նախագահի բժշկական զննությունը կազմակերպելու ընթացակարգի վերաբերյալ կարգավորումներ՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայության դեպքում համապատասխան դատարանի նախագահն այդ մասին հայտնում է Բարձրագույն դատական խորհրդին և Էթիկայի և կարգապահական հարցերի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հանձնաժողովին: 4. Եթե առերևույթ առկա է սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը, ապա համապատասխան դատարանի նախագահը դիմում է Բարձրագույն դատական խորհրդին և Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին: Բարձրագույն դատական խորհուրդը կազմակերպում է դատավորի բժշկական զննությունը (դատարանի նախագահի դեպքում՝ սեփական կամ Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ) սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգի համաձայն: Դատավորը պարտավոր է անցնել բժշկական զննությունը:», իսկ 3-րդ մասը հանել:		